ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ՀԵՐՈՍԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ (1920-ական թվականներ)

ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Մասնագիտական և ոչ մասնագիտական շրջանակներում շատ է խոսվում այն իրողության մասին, որ Հայոց ցեղասպանությունը կազմակերպած և իրականացրած երիտթուրք ոճրագործներին դեռևս 1919–1921 թթ. դատապարտել են հենց օսմանյան դատարանները՝ նրանց մեղավոր ճանաչելով հայերի տեղահանության ու կոտորածների մեջ: Այդպիսով առաջինը հենց օսմանյան իրավական համակարգն է անդրադարձել և գնահատական տվել Հայոց ցեղասպանության փաստին: Սակայն մի շարք իրողություններ ցույց են տալիս, որ օսմանյան դատարանների այդ շրջանի գործունեությունն ու որոշումները մեծ մասամբ պայմանավորված են եղել ստեղծված իրավիճակով, այլ ոչ թե համամարդկային արժեհամակարգին և արդարադատության սկզբունքներին նրանց հավատարմությամբ: Մասնավորապես՝ Առաջին համաշխարհային պատերազմում պարտված Օսմանյան կայսրությանը պարտադրված բազմաթիվ իրողություններից մեկն էլ Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին և իրականացնողներին պատժելն էր, որը, սակայն, կրում էր, մեծ մասամբ, իմիտացիոն և ոչ լիարժեք բնույթ: Բացի այդ, թուրքական իշխանությունները կարճ ժամանակ անց լծվեցին երիտթուրք ոճրագործների արդարացման ու հերոսացման գործին, իսկ արդեն Թուրքիայի Հանրապետությունում դա ստացավ նաև կոնկրետ իրավական ձևակերպում:

1918 թ. դեկտեմբերի 14-ին սուլթան Մեհմեթ VI-ի հատուկ հրովարտակով Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում հիմնվում են ռազմական ատյաններ «տեղահանության հանցագործներին դատելու համար»[1]: Ուշագրավ է, որ այդ ժամանակ անգամ նպատակ է եղել ստեղծել միջազգային դատարան չեզոք երկրների (Շվեյցարիա, Դանիա, Իսպանիա, Շվեդիա, Հոլանդիա) դատավորների ընդգրկմամբ, որը պետք է քններ հայերի ցեղասպանության հարցը, սակայն Մեծ Բրիտանիան[2] խոչըն-

---

[1] *Մ. Անումյան. Երիտթուրքերի 1919–1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Երևան, 2011, էջ 59:*

[2] *Նկատենք, որ երիտթուրք ոճրագործներին դատապարտելու հարցում սկզբնական շրջանում նախանձախնդիր Մեծ Բրիտանիան հետագայում փոխեց իր դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցին հետամուտ լինելու առումով և գերադասեց ավելի ռեալ աշխարհաքաղաքական շահերը: Պատահական չէ, որ մինչ օրս էլ Մեծ Բրիտանիան պաշտոնապես չի ճանաչել և դատապարտել Հայոց ցեղասպանության փաստը:*

դոտել է այդ նախաձեռնությանը[3]: Ինչևէ, հայերի տեղահանությունը և կոտորածը կազմակերպելու մեղադրանքով ձերբակալվել են մոտ 300 օսմանյան նախկին պաշտոնյաներ[4], այդ թվում և բարձրաստիճան: Սակայն ձերբակալման ենթակա մի քանի պաշտոնյաներ, ինչպես, օրինակ, Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և ուրիշներ, արդեն գտնվել են փախուստի մեջ ու նրանց դատավարությունը ընթացել է հեռակա:

Ձերբակալված երիտթուրք ոճրագործները պահվել են Ստամբուլի «Բեքիր աղա բյուլուղու» կոչված բանտում և կարևոր է նկատել, որ նրանց նկատմամբ մեղմ վերաբերմունքը դրսևորվել է արդեն մեկուսարանից և, այնտեղ ստեղծված պայմանները դրա խոսուն վկայությունն են: Նախ երիտթուրք կալանավորներն ազատ շփվել են իրար հետ, նրանց այցելել են հարազատները, ընկերները: Շեշտենք, որ ոճրագործներին հաճախ այցելել է նաև Մուսթաֆա Քեմալը՝ Թուրքիայի ապագա նախագահը: Այս մասին գրում է լրագրող Ահմեթ Էմին Յալմանը, ով նույնպես այդ ընթացքում որոշ ժամանակ անցկացրել է հիշյալ բանտում[5]: Նույն կերպ ոճրագործներին այցելել է մեկ այլ թուրք զորավար ևս՝ Քազըմ Քարաբեքիրը, ընդ որում՝ արևելյան ճակատ մեկնելուց առաջ[6]: Արևելյան ճակատում՝ Սարիղամիշի, Կարսի և հարակից շրջաններում, այդ ոճրագործը շարունակել է հայերի ցեղասպանությունը՝ նախ զբաղվելով նշյալ տարածքներում հայ որբերի բռնի իսլամացմամբ, իսկ ավելի ուշ արդեն Շիրակում (Ալեքսանդրապոլի շրջան) իրականացրել հայերի զանգվածային կոտորածներ:

Թուրքիայի երրորդ նախագահ Ջելալ Բայարը ևս, հետագայում պատմելով «Բեքիր աղա բյուլուղու»-ի մասին, նշում է, որ այնտեղ պահվող կասկածյալները ցանկացած պահի դուրս էին գալիս բանտից և վերադառնում երբ ուզեին[7]: Հենց այդպես է Դիարբեքիրի նախկին նահանգապետ և Հայոց ցեղասպանության իրականացնողներից մեկը՝ դոկտոր Ռեշիդը, փախել բանտից՝ հերթական անգամ դուրս գալով և այլևս ետ չվերադառնալով: Նման կերպ փախել են մի քանի երիտթուրք ոճրագործներ ևս:

Թուրքագետ Մ. Անումյանը, անդրադառնալով «Բեքիր աղա բյուլուղու» կալանատանը ստեղծված պայմաններին, իրավամբ, նկատում է. «Կալանավորներին շնորհված էին բանտին անհամապատասխան ազատություններ: Ձերբակալվածները ազատ ելումուտ էին անում մյուս բանտախցերը, այցի գնում միմյանց, խորհրդակցում իրար հետ, այդ թվում նաև՝ ապագա դատալսումներին հարմար պատասխաններ տալու հարցով: Նրանց այցելության եկած անձինք չէին խուզարկվում»[8]: Ի դեպ, այդ խորհրդակցությունների հետևանքով էր, որ հետագայում դատական նիստերի ժամանակ շատ մեղադրյալներ տվել են միանման ցուցմունքներ:

1919 թ. մարտի 8-ին սուլթանի հրամանագրով երիտթուրք մի շարք պարագլուխներ, բարձրաստիճան նախկին պաշտոնյաներ, ոճրագործներ հանձնվում են Ստամ-

---

[3] *Մ. Ա ն ո ւ մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 55:*

[4] *Նույն տեղում, էջ 57:*

[5] A. H ü r. İstanbul Divan-ı Harb-i Örfî Yargılamaları.– **T**araf, 28. XII. 2008.

[6] *Նույն տեղում:*

[7] *Նույն տեղում:*

[8] *Մ. Ա ն ո ւ մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 57:*

բուլի ռազմական արտակարգ ատյանին[9]: Դրանից հետո՝ 1919–1921 թթ. ընթացքում այդ ատյաններում տեղի են ունեցել 60-ից ավելի դատավարություններ, որոնք վերաբերել են հայերի տեղահանությանն ու կոտորածներին. ձերբակալվածներին ներկայացվել են մի շարք այլ մեղադրանքներ ևս[10]:

Մ. Անումյանը մի ուշագրավ ու կարևոր դիտարկում է անում առ այն, որ թուրքական դատարաններն անգամ այդ ժամանակ, ըստ էության, փորձում էին դատավարության իմիտացիա ստեղծել և հնարավորության դեպքում ձերբակալած հանցագործների նկատմամբ ավելի մեղմ դիրքորոշում էին որդեգրում: Ասվածի ամենախոսուն ապացույցներից է այն, որ ոճրագործների նկատմամբ ընդհանուր առմամբ ընդունված 20 մահապատժի դատավճիռներից ի կատար են ածվել միայն երեքը (Բողազլյանի գավառապետ Քեմալ բեյի, Ուրֆայի նահանգապետ Նուսրեթի, Երզնկայի ժանդարմերիայի հրամանատար Հաֆըզ Աբդուլլահ Ավնիի նկատմամբ), քանի որ մնացած 17-ը հեռակա վճիռներ էին, որովհետև տվյալ հանցագործները գտնվում էին փախուստի մեջ. «…ռազմական արտակարգ ատյանների դատական կազմերը մահվան դատավճիռ կայացնելիս ավելի «շռայլ» են գտնվել փախուստի մեջ գտնվող դատապարտյալների հանդեպ»[11]: Սակայն, չնայած դրան, ինչպես այն ժամանակ, այնպես էլ այսօր թուրքական տարբեր շրջանակներում ընդգծված թշնամանքով են վերաբերում և ծայրահեղ բացասական պիտակներով կոչում հիշյալ դատարաններին, դատավորներին. օրինակ, դատարաններից մեկի նախագահ Մուսթաֆա փաշային հիշատակում են Նեմրութ՝ դաժան, անխիղճ մականվամբ: Օսմանյան դատարանների և երիտթուրքերի դատավարության պարտադրված լինելը ապացուցող այլ փաստեր էլ կան. մասնավորապես՝ 1920 թ. քաղաքական իրավիճակի փոփոխության հետ կապված ոչ միայն բացահայտ քննադատեցին ռազմական գերագույն ատյանների գործունեությունը, այլև սկսեցին ձերբակալվել Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին ու իրագործողներին դատապարտած դատավորներին: Այդ դատավորների դեմ հարուցվեցին քրեական գործեր՝ ոճրագործներին խիստ դատելու, հարցաքննելու և նմանատիպ այլ «մեղքերի» համար, ու 1921 թ. վերջիններս դատապարտվեցին տարբեր ժամկետների ազատազրկման[12]: Այս ամենում վճռորոշ դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ քեմալականներն արդեն հաջողությունների էին հասնում և դառնում դրության փաստացի տերը:

Երիտթուրքերի դատավարություններից և հատկապես Բողազլյանի գավառապետ Քեմալ բեյի մահապատժի ի կատար ածվելուց (1919 թ. ապրիլի 10) հետո Ստամբուլում սկսվում են բողոքի զանգվածային միջոցառումներ, որոնք կազմակերպվում և ուղղորդվում էին երիտթուրքերի կողմից: Քեմալ բեյի թաղման արարողության ժամանակ դագաղը պատված է եղել Օսմանյան կայսրության պետական դրոշով, իսկ ռազմաբժշկական ուսումնարանի ու Ստամբուլի համալսարանի ուսա-

[9] *Նույն տեղում, էջ 67:*
[10] *Նույն տեղում, էջ 11:*
[11] *Նույն տեղում, էջ 92:*
[12] *Նույն տեղում, էջ 139:*

նողները թաղմանը բերել են ծաղկեպսակ, որի վրա գրված է եղել՝ «Թուրք ազգի մեծ նահատակ Քեմալ բեյ»[13]: Ըստ տարբեր տվյալների՝ Քեմալ բեյի թաղմանը մասնակցել է 10 հազար մարդ[14]: Իսկ 1919 թ. մայիսի 23-ին Ստամբուլում կազմակերպված բողոքի հանրահավաքին մասնակցել է մոտ 200 հազար ցուցարար[15]: Հասարակական այս դժգոհությունները ստիպում են օսմանյան կառավարությանը որոշակի զիջումներ անել. նախ ազատ են արձակվում 41 մեղադրյալ և հետո առժամանակ կասեցվում են դատավարությունները[16]: Մյուս կողմից Մեծ Բրիտանիան, անհանգստանալով մեղադրյալների պահպանման հարցով, 1919–1920 թթ. ընթացքում 144 ոճրագործի տեղափոխում է Մալթա կղզի[17]: Հետագայում այդ մեղադրյալները գիտական գրականության մեջ ստանում են «Մալթայի աքսորյալներ» անվանումը[18]:

Բողոքի այս հանրահավաքները վկայում էին, որ և՛ քաղաքական, և՛ հասարակական մակարդակով երիտթուրք ոճրագործները Օսմանյան կայսրությունում ընկալվում էին որպես հերոսներ, և նրանց հերոսացման գործընթացը, փաստորեն, սկսվել էր արդեն այդ ժամանակ և հետզհետե մեծ ծավալներ ընդգրկել: Վստահաբար կարող ենք պնդել, որ երիտթուրք ոճրագործներին հերոսացնելու գործընթացը գերիշխող է եղել Թուրքիայի Հանրապետության պատմության ողջ ընթացքում և մեր օրերում նույնպես շարունակվում է մեծ թափով: Դա դարձել է նաև թուրքական պետական ապարատի մտածողության մի բաղկացուցիչ մաս, որը կրել և կրում են թուրք պաշտոնյաների բազում սերունդներ ու ներկայացուցիչներ:

Երիտթուրքերի դատավարության ժամանակ Օսմանյան կայսրության որոշակի շրջաններում իշխանությունն իրենց ձեռքը վերցրած և երկրում, ըստ էության, երկիշխանություն հաստատած քեմալականները կամ Անկարայի իշխանությունները, բնականաբար, ծայրահեղ բացասաբար են վերաբերել ոճրագործների դատապարտմանը: Կարևոր է փաստել, որ Անկարայի կառավարությունն այդ ժամանակ արել է ոչ միայն քննադատող հայտարարություններ, այլև քաղաքական և, որոշ չափով, իրավական բնույթի քայլեր, որոնց իրավականությունը, իհարկե, կասկածելի է, քանի որ քեմալական իշխանություններն այդ ժամանակ ճանաչված չէին և միջազգային իրավունքի սուբյեկտ չէին: Այդ քայլերի դիտարկումը կարևոր է ոչ միայն տվյալ շրջանում քեմալականների դիրքորոշումը պարզ ըմբռնելու, այլև հետագայում նրանց քայլերի գաղափարական հիմքը հասկանալու համար:

Այսպես, Անկարայում՝ քեմալականների մայրաքաղաքում, ոճրագործների հերոսացումն սկսվել էր անմիջապես. 1920 թ. օգոստոսի 5-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովը (ԹԱՄԺ) ի նշան հարգանքի 10 րոպեով դադարեցրել է իր աշխատանքը, քա-

---

[13] C. Ö c â l. Milli Şehit Kanunları, http://www.turksolu.com.tr/480/cocal480.html

[14] *Մ. Ա ն ո ւ մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 93:*

[15] *Նույն տեղում, էջ 80:*

[16] *Նույն տեղում:*

[17] *Նույն տեղում, էջ 80–81:*

[18] *Այս մասին մանրամասն տե՛ս* V. Y e g h i a y a n. Malta Belgeleri: İngiltere Dışişleri Bakanlığı "Türk Savaş Suçluları" Dosyası, İstanbul, 2007.

նի որ նույն օրը Ուրֆայի նահանգապետ Նուսրեթը մահապատժի էր ենթարկվել[19]: 1920 թ. դեկտեմբերի 9-ին և 25-ին ԹԱՄԺ-ի որոշումներով համապատասխանաբար թոշակ նշանակվեց Քեմալ բեյի և Նուսրեթի ընտանիքներին[20]: Անցնելով իրավական ոլորտ՝ 1921 թ. օգոստոսի 11-ին Անկարայի կառավարությունն իր չունեցած լիազորություններով հայտարարում է, որ «լուծարում է Ստամբուլի ռազմական դատարանները»[21]: Հաջորդ օրը՝ օգոստոսի 12-ին, Մուսթաֆա Քեմալը Հայոց ցեղասպանությանը մեղսակցության մեջ մեղադրվողներին անվանում է «հայրենիքի զավակներ» և Մեծ Բրիտանիային սպառնում ձերբակալված ոճրագործների հանդեպ մահապատժի վճիռների ի կատար ածումը շարունակելու դեպքում սպանել իր մոտ գերության մեջ գտնվող անգլիացի փոխգնդապետ Ռավլիսոնին[22]: Նույն օրը ԹԱՄԺ-ը Ուրֆայի նահանգապետ Նուսրեթին և Բողազլյանի գավառապետ Քեմալին հռչակում է «ազգային նահատակ»[23]: Ավելի ուշ՝ 1923 թ. մարտի 31-ին, օսմանյան ռազմական դատարանների կողմից բոլոր դատապարտվածների համար ԹԱՄԺ-ը հայտարարել է ընդհանուր համաներում[24]:

Երիտթուրք ոճրագործներին հերոսացնելու քեմալական իշխանությունների այս քայլերը շարունակվեցին նաև հետագայում՝ արդեն Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո: 1926 թ. մայիսի 29-ին ԹԱՄԺ-ը սկսում է քննարկել Թուրքիայի կառավարության կողմից ուղարկված մի օրինագիծ, որը ներկայացվում է Դենիզլիի պատգամավոր Հայդար Ռուշթուի կողմից և որին աջակցում ու միանում են բազմաթիվ պատգամավորներ[25]: Օրինագիծը վերնագրված էր՝ «Հայկական հանցագործ կոմիտեների կողմից սպանված կամ էլ տարբեր կերպ հալածանքի ենթարկված պետական գործիչների ընտանիքներին անշարժ գույքի և հողատարածքի տրամադրման վերաբերյալ օրենք»: Օրենքի նախագիծը Ազգային ժողով էր ներկայացվել Թուրքիայի վարչապետ Իսմեթ Ինոնյուի ստորագրությամբ 1925 թ. դեկտեմբերի 25-ին: Ուղեկցող նամակում նախ նշվում է, որ օրինագիծը և դրանում տեղ գտած առաջարկները քննարկվել են 1925 թ. դեկտեմբերի 23-ին Թուրքիայի ֆինանսների նախարարության կողմից և հաստատվել: Բացի այդ, որպես օրենքի ընդունման պատճառ և շարժառիթ բառացիորեն նշված է. «Սա մի քայլ է, որով ազգը իր վշտակցությունն է հայտնում մեծ հույսերին և նպատակներին հետամուտ և այդ ճանապարհին իրենց կյանքը զո-

---

[19] *Մ. Ա ն ո ւ մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 139:*

[20] *Նույն տեղում, էջ 139–140:*

[21] Talat, Cemal, Enver, Azmi Paşa'ların öldürülüşü, Nemesis, Asala ve 12 Eylül, http://liberteryen.org/2012/01/talat-cemal-enver-azmi-pasalarin-oldurulusu-nemesis-asala-ve-12-eylul/

[22] *Նույն տեղում:*

[23] *Նույն տեղում, տե՛ս նաև* A. H ü r. *Նշվ. հոդվ.,* D i r i m. Ermeni Soykırımı, Mustafa Kemal ve devletin devamlılığı, http://arsiv.marksist.org/yazarlar/atilla-dirim/13786-ermeni-soykirimi-mustafa-kemal-ve-devletin-devamliligi, Erol T., "Milli Şehit Boğazlıyan Kaymakamı Kemal Bey", Türk Dünyası Tarih Dergisi, sayı 17, İstanbul, 1988, s. 46.

[24] Talat, Cemal, Enver, Azmi Paşa'ların öldürülüşü, Nemesis, Asala ve 12 Eylül, http://liberteryen.org/2012/01/talat-cemal-enver-azmi-pasalarin-oldurulusu-nemesis-asala-ve-12-eylul/

[25] E. A ç ı k s e s. Türkiye Büyük Millet Meclisi'nin Ermeni Komiteleri Tarafından Şehit Edilenlerin Ailelerine Yaptığı Yardımlar, Ermeni Araştırmaları, sayı: 6, Ankara, 2002, s. 84.

հած բարձրաստիճան անձանց ընտանիքներին և զավակներին ու նյութապես զրկում նրանց»[26]*: Օրինագծի առաջին հոդվածում նշված է. «Հայկական հանցագործ կոմիտեների կողմից սպանված կամ էլ տարբեր կերպ հալածանքի ենթարկված ներքոհիշյալ ցուցակում ընդգրկված պետական գործիչների ընտանիքներից ամեն մեկին* հայկական լքյալ գույքից *(ընդգծումը մերն է – Ռ. Մ.) հատկացնել բնակելի տարածք 20 հազար լիրայի արժողությամբ»: Օրենքի երկրորդ հոդվածում նշվում է, որ տրամադրվելիք գույքի արժեքը և վիճակը պետք է համապատասխանի զոհված անձի «ամենաբարեկեցիկ ժամանակվա» բնակարանային պայմաններին*[27]*: Օրինագիծը միաձայն քվեարկությամբ ընդունվում է ԹԱՄԺ-ի կողմից, պաշտոնապես հրապարակվում և ուժի մեջ մտնում 1926 թ. հունիսի 27-ին (թիվ 882 օրենք):*

Հարկ է նկատել, որ օրենքի նախագիծը մայիսի 29-ին ԹԱՄԺ-ում բավական ակտիվ քննարկումների առիթ է դառնում, սակայն բոլոր պատգամավորներն էլ համակարծիք էին ոճրագործների ընտանիքներին հայկական գույք հատկացնելու հարցում և նրանց միակ բանավեճը այդ ցուցակում այլ ոճրագործների անունների ներառումն էր: Բավական հետաքրքիր է դիտարկել այդ քննարկումները, որոնց ընթացքում Թուրքիայի խորհրդարանի պատգամավորները նկարագրում, գովերգում և փառաբանում էին տարատեսակ երիտթուրք գործիչների ու նրանց «սխրագործությունները»՝ անպայման շեշտելով դրանց հակահայկական և թուրքանպաստ բնույթը: Այդ քննարկումները նաև պարզորոշ ի ցույց են դնում թուրքական խորհրդարանականների ազգայնամոլ մտածողությունը: Այսպես, Սինոպի պատգամավոր Ռեջեփ Զյուհթուն, իր ելույթում գովերգելով օրենքի նախագիծը, նկատում է, որ դրա իրական ենթատեքստը ավելի խորքային է և պետք է հստակ հասկացնել հայերին հետևյալը. «Դուք՝ հայերդ, կարող եք որոշ թուրքերի նկատմամբ մահափորձ կազմակերպել և սպանել, սակայն մենք նրանց զավակներին կրկին ձեր փողերով կմեծացնենք և կդաստիարակենք, որպեսզի վաղը նրանք ձեր աչքը հանեն և ձեր գլուխը կոտրեն»[28]*:*

Ոճրագործների ցուցակի ընդլայնման առաջարկով հանդես եկած մի շարք պատգամավորների հիմնավորումը եղել է այն, որ կան այլ երիտթուրքեր ևս, որոնք մեծ ներդրում ունեն Հայոց ցեղասպանության իրականացման հարցում և որոնց ընտանիքները նույնպես «արժանի են» ստանալ հայկական լքյալ գույքից տուն ու հողատարածք: Օրինագծի սկզբնական տարբերակին կից կար երիտթուրք բարձրաստիճան պաշտոնյաների ցուցակ, որոնց ընտանիքներին պետք է հատկացվեր հայկական գույք: Ավելին՝ կոնկրետ ներկայացվում էր նաև նրանց ընտանիքների անդամների, ժառանգների, ազգականների թվաքանակը և անունները, որոնց էլ պետք է հատկացվեր գույքը[29]*: Այդ ցուցակում ընդգրկված էին հետևյալ ոճրագործների ընտանիքները.*

1. *Թալեաթ փաշա*

---

[26] *Նույն տեղում:*

[27] *Նույն տեղում, էջ 85:*

[28] *Նույն տեղում, էջ 88:*

[29] *Այդ ցուցակը տե՛ս* E. A ç ı k s e s. *նշվ. հոդվ., էջ 87:*

2. *Ջեմալ փաշա*
3. *Ջեմալ Ազմի*
4. *Բահաեթին Շաքիր*
5. *Ջեմալ փաշայի համհարզ Սուրեյա*
6. *Ջեմալ փաշայի համհարզ Նուսրեթ*
7. *Սաիթ Հալիմ փաշա*
8. *Ուրֆայի նահանգապետ Նուսրեթ*
9. *Բողազլրյանի գավառապետ Քեմալ*
10. *Դիարբեքիրի նահանգապետ դոկտոր Ռեշիդ:*

Ի դեպ, դոկտոր Ռեշիդը Հայոց ցեղասպանությանը մեղսակցություն ունենալու մեղադրանքով ձերբակալված, այնուհետ փախուստի դիմած թուրք պաշտոնյաներից է, ով հետապնդման ժամանակ հասկանալով, որ ձերբակալվելու է, ինքնասպան է եղել, այսինքն՝ հայերի կողմից չի սպանվել, սակայն, այնուամենայնիվ, ներկայացված է որպես «նահատակ», որի ընտանիքին տրամադրվելու էր հայկական գույքից փոխհատուցում: Օրենքի վերնագրի մեջ անգամ տեղ էր գտել այնպիսի ձևակերպում, որը թույլ կտար անմիջականորեն հայերի կողմից չսպանված ոճրագործներին ևս ընդգրկել այդ խմբում: Օրենքի «Հայկական հանցագործ կոմիտեների կողմից սպանված կամ էլ տարբեր կերպ հալածանքի ենթարկված *(ընդգծումը մերն է – Ռ. Մ.)» ձևակերպումը արված էր հենց այդ նպատակով, այսինքն՝ դոկտոր Ռեշիդի փախուստը և ինքնասպանությունը Թուրքիայի կառավարությունը համարում էր հայերի կողմից կազմակերպված «հալածանքի» դրսևորում:*

Ինչպես երևում է ցուցակից, այնտեղ ընդգրկված չէր մեկ այլ հայտնի ոճրագործի՝ Էնվեր փաշայի անունը: Սա էլ պայմանավորված էր նրա ու Մուսթաֆա Քեմալի անձնական լարված հարաբերություններով և թշնամանքով: Մինչև 1939 թ. Էնվերի ընտանիքն անգամ իրավունք չի ունեցել վերադառնալ Թուրքիա և միայն Աթաթուրքի մահից հետո կառավարության 4255 որոշմամբ Էնվերի երեք երեխաներին՝ Մահիֆեյքերին, Թուրքանին և Ալիին իրավունք է տրվել վերադառնալ Թուրքիա[30]: Ավելի ուշ՝ 1996 թ., Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի նախաձեռնությամբ և պետական արարողակարգով իրականացվում է Էնվերի աճյունի տեղափոխումը Տաջիկստանից և վերահուղարկավորումը Ստամբուլում[31]:

… Խորհրդարանական քննարկումների ժամանակ ծայրահեղ ազգայնամոլությունը երբեմն պատճառ է դարձել տրամաբանությունից լիովին դուրս և ատելությունից կուրացած առաջարկների, որոնք ևս հավանության են արժանացել Թուրքիայի օրենսդիր մարմնի կողմից: Այսպես, Գիրեսունի պատգամավոր Հաքքը Թարքքն առաջարկում է այդ ցուցակում ընդգրկել Մուշի նահանգապետ Սերվեթի ընտանիքին՝ հիշատակելով, որ նա նույնպես «հայկական կոմիտեների զոհն է»[32]: Սակայն քննարկ-

---

[30] A. Hür. *Նշվ. հոդվ.:*

[31] *Ռ. Սաֆրաստյան, Ռ. Մելքոնյան, Ա. Դումանյան, Վ. Տեր-Մաթոսյան, Հ. Չաքրյան, Ա. Հովհաննիսյան. Թուրքիայի Հանրապետության պատմություն, Երևան, 2014, էջ 290, տողատակ 29:*

[32] E. Açıkses. *Նշվ. հոդվ., էջ 89:*

ման ժամանակ ի հայտ է գալիս, որ Մուշի նախկին նահանգապետը մահացել է հիվանդությունից և հայերի կողմից չի սպանվել: Այս մասին հայտարարում է Գյումուշհանեի պատգամավոր Ֆեհմին, ինչին ի պատասխան արդեն Մուշի պատգամավոր Իլյաս Սամին ասում է, որ, իրոք, Սերվեթը մահացել է հիվանդությունից, սակայն «հայկական կոմիտեների պատճառով է հիվանդացել», ուստի նա ևս նահատակ է[33]: Այնուհետև Աքսարայի պատգամավոր Նեջեթն առաջարկում է այդ ցուցակում ընդգրկել երզնկացի Հաֆըզ Աբդուլլահին[34], և այդպիսով կառավարությանն ներկայացրած նախնական ցուցակում տեղի են ունենում համալրումներ: Օրենքի ընդունումից հետո էլ Հայոց ցեղասպանությանը մասնակցած տարբեր ոճրագործների ընտանիքներ շարունակել են դիմել կառավարությանն իրենց նույնպես գույք տրամադրելու պահանջով, սակայն դրանք հիմնականում մերժվել են[35]: Թուրքիայում հայտնի վերլուծաբան, լրագրող Մուրադ Բարդաքչին օսմանյան ոճրագործ պաշտոնյաների ընտանիքներին հատկացվող գույքը համարում է «արյան փող»[36] և հավելում, որ թուրքական արխիվներում այդ փոխհատուցումների մասին բավական շատ փաստաթղթեր կան: Ավելին՝ այդ գործընթացը չի ավարտվել միայն 1926 թ. օրենքի ընդունումով, այլ շարունակվել է նաև Թուրքիայի երկրորդ նախագահ Իսմեթ Ինոնյուի կառավարման տարիներին (1938–1950 թթ.)[37]:

Հույժ կարևոր է օրենքի այն դրույթը, համաձայն որի՝ երիտթուրք ոճրագործների ընտանիքներին փոխահատուցում պետք է հատկացվեր հատկապես հայկական լքյալ գույքից: Խորհրդարանական քննարկումներում առաջարկվել է օրենքում նշել «Ազգային գույքի հաշվին փոխհատուցում» ձևակերպումը, սակայն դա լուրջ առարկության է հանդիպել, և պատգամավորների բաձարձակ մեծամասնությունը պաշտպանել է այն առաջարկը, որ պետք է հստակ ամրագրվի «հայկական լքյալ գույքից» եզրույթը[38]: Ավելորդ չէ նաև փաստել, որ ոճրագործներից յուրաքանչյուրի ընտանիքին հայկական գույք տրամադրող որոշման տակ ստորագրել են Թուրքիայի նախագահ Մուսթաֆա Քեմալը, վարչապետ Իսմեթ Ինոնյուն և բոլոր նախարարները[39]:

---

[33] *Նույն տեղում, էջ 91:*

[34] *Նույն տեղում, էջ 89:*

[35] *Նույն տեղում, էջ 93:*

[36] M. B a r d a k ç ı. Atatürk, 1915'e 'soykırım' diyen Hasan ağabeyin ailesine 'kan parası' olarak Ermeni gayrımenkullerini bağışlamıştı, http://www.haberturk.com/ yazarlar/murat-bardakci/793024-ataturk-1915e-soykirim-diyen-hasan-agabeyin-ailesine-kan-parasi-olarak-ermeni-gayrimenkullerini-bagislamisti

[37] *Նույն տեղում:*

[38] E. A ç ı k s e s. *Նշվ. հոդվ., էջ 91:*

[39] M. B a r d a k ç ı. *Նշվ. հոդվ.:*

Բողազլյանի գավառապետ Քեմալ բեյի աղջկա՝ Մյուշերեֆ Գյուրենջիի[40] հուշերում մի հետաքրքիր դրվագ կա՝ կապված իր պապի և Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի հանդիպման հետ, որտեղ նաև նկարագրված է նախ թուրքական վերնախավի հանցագործ մտածողության մի կարևոր առանձնահատկություն և երկրորդ՝ հայկական գույքի թալանի կոնկրետ օրինակ: Ըստ այդմ, Թուրքիայի նախագահն այցելել է ոճրագործ Քեմալ բեյի հորը և նրան դիմել «պետության հայր» արտահայտությամբ ու հավելել. «Դու այնպիսի մի որդի ես դաստիարակել, որ եթե նա ջահը չբռներ մենք չէինք կարող այս կրակը վառել: Մեր ճանապարհը լուսավորողը քո որդին էր: Դու գնա Ստամբուլ և 20 000 լիրայի արժողությամբ մի գույք հավանիր, միայն թե հայկական գույք լինի, որ տանք ձեր ընտանիքին»[41]: Ի դեպ, նույն Մուսթաֆա Քեմալը, որին երբեմն սխալմամբ առանձնացնում են այլ երիտթուրքերից և մեջբերում հարցազրույցներից մեկի ժամանակ Հայոց ցեղասպանությունը կազմակերպողների հասցեին նրա քննադատությունը, անգլիացի Ֆրյուի հետ 1920-ականների սկզբին զրույցի ժամանակ բառացիորեն հայտարարել է. «Իթթիհաթ վե թերաքքին հայրենասեր կազմակերպություն էր»[42]:

Ամփոփելով՝ փաստենք. ինչպես արդեն նշվել է, երիտթուրք ոճրագործների հերոսացման գործընթացը շարունակական բնույթ է կրել և այսօր էլ Թուրքիայի տարբեր բնակավայրերում կարելի է տեսնել նրանց արձանները, նրանց անունները կրող դպրոցներ կամ փողոցներ: Ուշագրավ է, որ թուրքական ազգայնամոլական գիտական շրջանակներում էլ կարելի է հանդիպել երիտթուրքերի հերոսացումը և կոնկրետ «Հայկական հանցագործ կոմիտեների կողմից սպանված կամ էլ տարբեր կերպ հալածանքի ենթարկված պետական գործիչների ընտանիքներին անշարժ գույքի և հողատարածքի տրամադրման վերաբերյալ օրենք»-ը ոչ միայն արդարացնող, այլև գովերգող տեսակետների: Մասնավորապես, թուրք գիտնական Էրդալ Աչքքսեսը գրում է. «Թուրքիայի Հանրապետությունը այս նահատակներին տեր կանգնելով՝ վախեցրեց հայ հրոսակներին և նրանց կողմնակիցներին»[43]: Այս ամենը ցույց է տալիս, որ երիտթուրքերի ոճիրն արդարացնող ու հերոսացնող, ինչպես նաև Հայոց ցեղասպանության փաստը ժխտող մտածողությունը լուրջ հիմքեր և լայն տարածում ունի Թուրքիայի հասարակական, քաղաքական ու գիտական շրջանակներում:

---

[40] *Թուրքական ազգայնամոլական շրջանակներում Մյուշերեֆ Գյուրենջիին մինչև 2008 թ. կոչում էին □ամենատարեց նահատակի դուստր□: Այս տիկինը նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ կատաղի պայքար մղողներից էր, ինչպես նաև թուրքական ուրացման ու կեղծիքի քաղաքականության կրողն ու ակտիվ քարոզողը, ով հաճախ էր իր բնակարանից մամլո ասուլիսներ տալիս հատկապես այն ժամանակ, երբ միջազգային ասպարեզում ակտիվանում էր Հայոց ցեղասպանության հարցը: Այդ մասին մանրամասն տե՛ս* C. Öcâl. *Նշվ. հոդվ.:*

[41] C. Öcâl. Milli Şehit Kaymakam Kemal Bey'in kızıyla sohbet, Türk Dünyası Tarih Dergisi, sayı 88, İstanbul, 1994, s.38; Uzun S., „Bir mülk beğen, yalnız Ermeni malı olsun" http://www.hayastaninfo.net/selcuk-uzun/4052-selcuk-uzun-ermeni-soykirimi-ve-ermenilerin-mali

[42] *Մ. Անուշյան. նշվ. աշխ., էջ 87:*

[43] E. Açıkses. *Նշվ. հոդվ., էջ 94:*

ПРОЦЕСС ГЕРОИЗАЦИИ ОРГАНИЗАТОРОВ И ИСПОЛНИТЕЛЕЙ ГЕНОЦИДА АРМЯН В ТУРЦИИ (1920-е ГОДЫ)

РУБЕН МЕЛКОНЯН

Резюме

В профессиональных и непрофессиональных кругах часто говорится о том, что еще в 1919–1921 гг. османские суды осудили организовавших и осуществивших Геноцид армян преступников-младотурок, признав их виновными в переселении и резне армян. Таким образом, именно османская система правосудия первой обратилась к Геноциду армян и дала ему соответствующую оценку. Однако ряд фактов свидетельствует о том, что решения судов вскоре стали носить формальный характер, а младотурецкие преступники были героизированы. Некоторые из них продолжали занимать высокие государственные посты уже в республиканской Турции, другие были героизированы посмертно. Героизация преступников в Республике Турция имела также конкретную правовую основу. 29 мая 1926 г. Великое национальное собрание Турции приняло закон «О передаче земель и недвижимого имущества семьям турецких государственных деятелей, убитых или подвергшихся насилию со стороны армянских преступных комитетов». В рамках этого закона из «покинутого» армянского имущества более десяти семьям младотурок-убийц было предоставлено жилье общей стоимостью в 20 000 лир. Этот факт, с одной стороны, свидетельствует о грабеже армянского имущества на государственном уровне, а с другой, указывает на продолжительность и преемственность преступного мышления.

THE PROCESS OF THE HEROIZATION OF THE ORGANIZERS AND EXECUTORS OF THE ARMENIAN GENOCIDE IN TURKEY (the 1920s)

RUBEN MELKONYAN

Summary

It is widely discussed in the vocational and non-vocational circles that as early as in 1919–1921 the Young Turks, organizers and executors of the Armenian Genocide, were convicted by the Ottoman courts for exile and slaughter of Armenians. Thus, the Ottoman justice system was the first to refer and evaluate the fact of the Armenian Genocide. However, the range of the facts shows that soon the decisions of the courts became formal, moreover, the Young Turks were glorified and heroized. Some of them even continued to hold high state offices in the Republican Turkey, the others were heroized posthumously. The steps of heroization of the assassinators in the Republic of Turkey had also had certain legal basis. For example, on the

29th of May 1926 the Grand National Assembly of Turkey adopted the law “On granting the lands and immovables to the families of the Turkish officials killed or oppressed by Armenian criminal committees”. According to the law more than 10 families of Young Turks got 20.000 Turkish liras worth of dwellings from the “abandoned” Armenian properties. This fact shows the plundering of the Armenian property at the highest state level and at the same time indicates the continuity of the criminal thinking.